



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՅՈՒ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՐ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԼՈՒՍԱԴՈՐ ՇՈՂՆ Է ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

2009ի տարեմուտին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը ահաւասիկ դարձեալ ցնծութեամբ ու հաճութեան զգացումներով կը համակէ մեր հոգիները: Իբրեւ հաւատացեալ զաւակները Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, մանկացեալ Փրկչին «մեծ եւ սքանչելի խորհուրդ»ին կենսատու պատգամով զիրար կը շնորհաւորենք ու բարեմաղթութիւններ կը փոխանակենք, որպէսզի աւելի քան երկու հազար տարի առաջ, հրեշտակներուն «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» քաղցրահունչ երգերով մարդկութեան տրուած աւետիսը ընդմիշտ լուսաւորէ մեր օրերը եւ մնայ մեր անձնական ու հաւաքական կեանքերուն լուսւոր շողն ու առաջնորդը, զայն լիցքաւորողը:

Աստուածորդւոյն մեր մէջ մարդեղացումն ու Հրաշալի Ս. Ծնունդը, երկնաւոր Հօր կողմէ մարդկութեան տրուած մեծագոյն պարգեւն Է. «**Գոհութիւն Աստուծոյ՝ իր անպատմելի պարգեւին համար**» (Բ.Կր 9.15): Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ, թէ մարդը, արարչագործութենէն սկսեալ ու յաջորդող դարերուն, ինչպիսի՛ երկնատուր բարիքներ վայելած է մարդախնամ Աստուծոյ անհուն սիրոյն որպէս արդիւնք: Իսկ Քրիստոսի մարդեղութեամբ, Աստուած յայտնեց մարդոց նկատմամբ իր ունեցած անհուն սերը. «**Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ**» (Յհ 3.16): Քրիստոսի ծնունդով մարդուն շնորհուեցաւ յաւիտենական կեանքի խոստումը՝ «**Ես աշխարհ եկայ որ առաւել կեանք ունենաք**» (Յհ 10.10):

Բազում հրաշքներով յատկանշուած է Աստուածորդւոյն Ս. Ծնունդը: Նախ, հրեշտակը Աստուածամօր աւետեց անապական ծնունդի աւետիսը եւ Ս. Կոյս Մարիամ Աստուածածինը՝ հեզութեամբ ու խոնարհութեամբ ընդունեց աստուածային տնօրինումը, հրեշտակին ըսելով. «Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածդ ըլլայ» (Ղկ 1.38): Յիսուսի ծննդեան օրը, հրեշտակները հրաշալի ծնունդը առաջին հերթին աւետեցին բարի հովիւներուն, իսկ փայլուն աստղը եղաւ Արեւելքի իմաստուն մոգերուն

առաջնորդը: Բոլորն ալ ուղղուեցան այն համեստ յարկը՝ Բեթլեհեմի մտուրը, ուր իջեալանած էր Աստուածորդին՝ մանուկ Յիսուսը՝ ծննդեան առաջին օրէն իսկ խոնարհութեան ու համեստութեան պատգամը տալով հաւատացեալներուն:

Այնուհետեւ, Յիսուսի երկրաւոր կեանքը յատկանշուեցաւ բարութեամբ, խոնարհութեամբ եւ մինչեւ մահ Աստուծոյ կամքին հնազանդութեամբ: Անոր բաշխած բարիքները անգնահատելի նուէր եղան մահկանացուներուս. Ինք որ հարուստն է, մեզի համար աղքատացաւ, որպէսզի Իր աղքատանալովը մենք հարստանանք (Յմմտ. Բ. Կր 8.9): Եւ մենք, ահաւասիկ դարերէ ի վեր, ամանորին յաջորդող Ս. Ծննդեան տօնը կը նշենք մեր հարազատներուն հետ նուէրներ փոխանակելով, մեր նուէրներէն բաժին կը հանենք նաեւ ազգին, եկեղեցիին, դպրոցներուն, հաստատութեանց ու մեր ազգային կեանքի թագադրումը հանդիսացող մայր հայրենիքին: Պօղոս Առաքեալ հաւատացեալներուն կը թելադրէ, ըսելով. «**Իւրաքանչիւրը թող տայ՝ նայած իր սրտի յօժարութեան եւ ո՛չ թէ չկամութեամբ կամ պարտաւորուած զգալով. որովհետեւ Աստուած զուարթառատ կերպով նուիրողը կը սիրէ**» (Բ.Կր 9.7):

Նուիրաբերումը, սիրելիներ, ազնիւ գործ է, կ'ազնուացնէ նուիրողը ու անոր հոգիին մէջ ցնծութիւն կը տարածէ, նման այն բաւարարութեան, զոր ապրեցան Ստուրին մէջ նորածին Յիսուսին ընծայաբերող հովիւներն ու մոզերը՝ իւրաքանչիւրը իր կարողութեան չափով:

Զրիստոսի Ս. Ծնունդը յուշող այս հրաշապատումներու թելադրանքով է որ այսօր աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, փառք տալով, որ Ան մեզի պարգեւեց տարի մը եւս ծառայելու եւ իրարու օգնութեան ձեռք երկարելու առիթը: Երախտագիտութիւն կը յայտնենք Իր բոլոր բարիքներուն ու շնորհներուն համար, վստահ ըլլալով որ Ան մեր՝ հաւատացեալներուս յոյսը պիտի արդարացնէ ու յառաջիկային եւս, մեր երկրաւոր կեանքի բոլոր օրերուն, Իր խնամատար Ս. Աջը հովանի պիտի պահէ մեր անհատական ու հաւաքական կեանքերուն վրայ: Մեր սիրտերը միշտ պիտի լեցուին Յիսուսի կատարեալ ուրախութեամբ (Յմմտ. Յհ 17.13):

Արդարեւ, ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, մեր դիմաց կը բացուին նոր հորիզոններ: Նորագոյն մեկնակէտը, անկասկած, եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը, որ համակարգեց ու նախագծեց անմիջական ապագայի մեր եկեղեցական, ազգային եւ մշակութային գործունեութեան ուղին: Մեր եկեղեցւոյ ու անոր ճամբով՝ մեր երիտասարդներուն, նորահաս սերունդին հոգեկան ու ազգային դաստիարակութիւնը նոր մղում պիտի ստանայ, մեր կրթական կեանքը պիտի ապրի նոր վերակենսաւորում, իսկ մեր ազգային պահանջատիրութեան երթը պիտի առաջնորդուի դէպի նոր նուաճումներ՝ մինչեւ մեր հաւաքական տենչերուն իրականացման հանգրուանը:

Արդ, Ամանորի ու Ս. Ծննդեան հրաշափառ եւ բարեբաստիկ տօներուն առիթով, որդիական սիրով մեր շնորհաւորութիւնները կ'ուղղենք Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, մաղթելով քաջամոզչութիւն եւ բեղուն արդիւնաշատ տարիներ: Մայր Յայրենիքի պետութեան ու քաղաքական ղեկավարներուն կը մաղթենք արեւշատութիւն, իմաստութիւն

Եւ ժողովրդանուէր ծառայութիւն: Ի սրտէ կը շնորհաւորենք նաեւ Թեմիս հոգեւորականաց դասուն, Ազգային Իշխանութեան, Երեսփոխանական ժողովին, մեր եկեղեցիներու հոգաբարձական կազմերուն ու անոնց կողքին գործող բոլոր միաւորներուն, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինին ու վարժարաններու տնօրէններուն, անձնակազմերուն, սերունդ կերտող կրթական մշակներուն, ազգային կազմակերպութեանց, միութեանց, հաստատութեանց եւ մարմիններուն, բարերարներուն ու մեր հաւատացեալ ժողովուրդին:

Ս. Ծնունդով աշխարհը նոր դարաշրջանի մը առաջնորդող Աստուածորդիէն կը խնդրենք, որ սիրոյ, խաղաղութեան ու հաճութեան հոգին ու զգացումները տարածէ ամբողջ աշխարհին ու բոլոր ժողովուրդներուն, դարմանելով մարդկութիւնը տանջող տագնապներուն հետեւանքները եւ բոլորս հեռու պահելով ֆիզիքական, բարոյական ու տնտեսական ամէն վտանգէ ու փորձութենէ:

Թող հաւատքի, յոյսի, սիրոյ, խաղաղութեան ու հաճութեան ալիքները ողողեն Հայաստանը, Արցախն ու սփիւռքեան մեր օճախները, եւ թող մեր ժողովուրդին կեանքը պայծառանայ Ս. Ծննդեան բազմախորհուրդ բարիքներով:

**Շնորհաւոր նոր տարի,
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզի եւ մեզի մեծ աւետիս:**

Աղօթարար՝

Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ս. Ծնունդ, 2009

PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS MESSAGE

**THE FEAST OF THEOPHANY
IS THE LUMINOUS RAY OF OUR LIVES**

On the eve of the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ, our hearts are overcome with joy and wonder at the “Great and Marvelous Mystery” of the Birth of our Savior as we exchange well wishes and pray for the good tidings and praise of the angels proclaiming “Glory to God in the highest, and on earth peace, goodwill toward men” to guide us and illuminate and uplift our individual and collective lives.

The Glorious Birth and incarnation of the Son of God as man is the greatest gift bestowed to mankind by our Heavenly Father, **“Thanks be to God for His indescribable gift”** (2 Corinthians 9:15). Mankind, from creation and on,

has enjoyed the abundant divine blessings of God; however God revealed His undying love through the manifestation of Jesus Christ as man, **“For God so loved the world that He gave His only begotten Son, that whoever believes in Him should not perish but have everlasting life”** (John 3:16). This promise of eternal life was made possible by the Birth of Christ as the Lord said, **“I came that they may have life”** (John 10:10).

There are many miracles associated with the Birth of the Baby Jesus. The first was the announcement of the Immaculate Conception by the angel and the response of the Virgin Mary, **“Behold the maidservant of the Lord! Let it be to me according to your word”** (Luke 1:38). Another was the good tidings of the angels to the shepherds and the Star of Bethlehem which shone brightly on the day of His Birth and led the magi to the humble manger.

Thereafter, the earthly life of Jesus Christ was characterized by goodness, humility, and obedience to the will of God until His death. The grace of our Lord became the greatest gift for mortal men, **“that though He was rich, yet for your sakes He became poor, that you through His poverty might become rich”** (2 Corinthians 8:9). For centuries we continue to celebrate His Birth by exchanging gifts with our loved ones following the instruction of Apostle Paul, **“So let each one give as he purposes in his heart, not grudgingly or of necessity; for God loves a cheerful giver”** (2 Corinthians 9:7).

Giving is a humble act; it humbles and brings joy to the heart and soul of the giver in the same manner that it brought joy and humility to the magi who presented the Baby Jesus with gifts in the manger.

It is with these sentiments that today we pray and give glory to Almighty God for granting us yet another year to serve and give to one another. We give thanks and praise for His abundant blessings and pray for His Watchful Eye to safeguard us in our individual and collective lives, **“But now I come to You, and these things I speak in the world, that they may have My joy fulfilled in themselves”** (John 17:13).

As in previous years, we reached new heights this year as well, culminating in the General Assembly of the Catholicosate of Cilicia during which our future religious, national, and cultural endeavors were drafted. In the coming year, through our church, the Christian education of our youth will receive new impetus, our educational institutions will be revitalized, and our quest to secure our nationals demands will continue with renewed vigor until our dreams are realized.

On the blessed occasion of the New Year and the glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ, with filial love we salute His Holiness Catholicos Aram I, wishing him many more fruitful years, and we pray for prosperity and a bright future for the leaders and compatriots of our Homeland. We congratulate and extend our well wishes to our Clergy, Religious and Executive Councils, Delegates, Boards of Trustees, Board of Regents, principals, educators, community organizations, and our faithful parishioners.

May the tidings of love, harmony, and goodwill spread throughout the world and restore mankind. May the virtues of faith, hope, love, and peace permeate throughout Armenia, Artsakh, and the Diaspora, and may the

Armenian people be enlivened by the manifold blessings granted to us by the Birth of our Savior.

**Happy New Year
Christ is Born and Revealed**

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian
Prelate, Western United States

New Year 2009